



Տնօրենի խոսքը

Երեկվա պատմությունը և այսօրվա իրականությունը

Հայ և թուրք ժողովուրդների գոյակցության պատմությունը հաշվվում է դարերով: Շուրջ ինն ու կես դար թյուրքական տարբեր նվաճողների պետություններում ապրել ու ապրում է հայը՝ սելջուկահպատակ, տաճկահպատակ ու թուրքահպատակ: Ապրել ու ապրում է մեծ հումանիստի նկարագրած «Անատոլիայի անմար դժոխքում»: Մինչև մեր օրերը:

Այս օրերին, երբեմն կարծիք է հնչում, թե երկու ժողովուրդները մեկ հազարամյակ ապրել են միասին, հաշտ ու համերաշխ, գոհ ու երջանիկ, և ժողովուրդների գոյակցությունը սովորվել է բացառապես նախորդ դարասկզբին: Իրականությունը սակայն այլ է: Դարեր շարունակ ժողովուրդների հարաբերությունները եղել են հստակորեն ասիմետրիկ - անհավասար. մի կողմից թյուրքական պետական ինստիտուտները, մյուս կողմից՝ տաճկահպատակ հայը: Իսկ թյուրքական պետությունն ու դրա ինստիտուտները երբեք չեն նպաստել հայ ինքնության ու հայ մշակույթի պահպանմանն ու զարգացմանը: Ո՛չ նախկինում, ո՛չ ներկայում: Երկու ժողովուրդների հարաբերությունները զարգացել են այս իրողության պայմաններում: Հայոց ցեղասպանությունը, ավաղ, այս իրողության անբաժան մասն է:

Աշխարհի մեր փոքր անկյունում նախորդ դարը երեք՝ օսմանյան, ռուսական ու խորհրդային կայսրությունների փլուզման ակնատեսը դարձավ: Քսաներորդ դարի հնոցում ծնվեցին նաև հայկական երեք պետություններն ու մերօրյա Թուրքիայի հանրապետությունը: Նախորդ դարավերջին բացվեց հարաբերությունները նոր՝ միջպետական, հավասարության սկզբունքի վրա ձևավորելու պատուհանը: Սակայն ընդհուպ մինչև քսանմեկերորդ դարի առաջին տասնամյակը հայկական նորանկախ պետության և Թուրքիայի միջև հարաբերությունները թաղված մնացին «Անատոլիայի անմար դժոխքի» շուրջ հազարամյա մոխիրների տակ:

Եվ միայն վերջին տարիներին փորձ արվեց մոխրի տակից վեր հանել և նոր որակ ու նոր կյանք տալ հայ-թուրքական հարաբերություններին: Հայ-թուրքական միջպետական հարաբերությունների կարգավորման գործընթացը, ըստ էության, երկու տարվա պատմություն ունի: Տարիներ, որոնք սահմանի երկու կողմերում ապրող բազում հայաստանցիների ու թուրքահպատակների պարզևեցին սկզբում զարմանքի, նաև զայրույթի, ապա հույսի, և ի վերջո, հիասթափության զգացումների ողջ ներկայակակը: Եկավ մի պահ, երբ թվում էր, թե հարևանության և հավասարության խոփն ի վերջո կվարի հարևան պետությունների միջև հարաբերությունների խոպանը: Սակայն գործընթացը կարծես թե մտավ փակուղի այն բանից հետո, երբ հարևանության ու հավասարության խոփը դեմ առավ նախապայմանների ու ասիմետրիկ քաղաքականության քարին: Վստահ եմ,

ՄՉՄԿ Լրատուն հրապարակվում է 2010թ. ապրիլից: Լրատուն նպատակ ունի բարելավելու մեր հաղորդակցությունը Հայաստանում և տարածաշրջանում քաղաքացիական հասարակության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև զարգացման աջակցող կառույցների՝ մեր գործընկերների հետ: Հուսով ենք, որ Լրատուն օգտակար կլինի Ձեզ համար, հնարավորություն կընձեռնի տեղեկանալ մեր ընթացիկ աշխատանքին, կներկայացնի մեզ ու մեր գործունեությունը:

որ գործընթացը նոր շունչ ու նոր թափ կստանա, երբ երկու կողմ հավասարության և հարևանության սկզբունքները կրկին կկարևորվեն ամենից առավել և կդրվեն գործընթացի սրտում: Հակառակ պարագայում միշտ կգտնվեն գործընթացը խաթարելու ռացիոնալ, իռացիոնալ, ընդհուպ մինչև արևուղի նախապայմաններ՝ «մինչև գետերը չփոխեն իրենց հոսանքը կամ արևը մայր մտնի արևելքում» տրամաբանությամբ: Այս առումով կարևորում ենք երկու երկրների իշխանությունների ու քաղաքացիական հասարակության կառույցների միջև հավասար ու հարևանական՝ փոխշահավետ սկզբունքների հիման վրա գործակցության խթանումը յուրաքանչյուր հնարավորության պարագայում: Տարածաշրջանային ոչ մի քաղաքական կամ տնտեսական ամպ չպետք է ստվերի նման գործակցությունը: Այլապես, ինչ իմաստ ունեն ցրել «Անատոլիայի անմար դժոխքի» դեռևս թարմ ու այրող հիշողության թուխպերը, եթե դրանց պիտի փոխարինեն նոր, արդեն՝ միջպետական անվստահության ու քաղաքական շահարկումների ամրոպաբեր ամպերը:

Թևան Պողոսյան ՄՉՄԿ գործադիր տնօրեն

Ծրագրերի ընտրանի

Օժանդակություն Նիդերլանդների վերադարձող հայ միգրանտներին

2010թ. հուլիսի 8-ին Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը Նիդերլանդների Թագավորության Արդարադատության նախարարության Հայրենադարձության և վերադարձի ծառայության հետ կնքեցին համաձայնագիր Նիդերլանդներից կամավոր կամ հարկադրաբար վերադարձող Հայաստանի քաղաքացիներին վերաինտեգրման աջակցություն տրամադրելու մասին:

Ակնկալվում է, որ ծրագրի շրջանակներում ՀՀ շուրջ 75 ՀՀ քաղաքացիների համար իրական հնարավորություն կստեղծվի լիարժեքորեն ինտեգրվելու ՀՀ տնտեսության և հասարակության մեջ և լիարժեքորեն իրացնելու ՀՀ քաղաքացու և մարդու հիմնարար իրավունքներն ու պարտականությունները: Վերաինտեգրմանն ուղղված աջակցության

ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության օժանդակությամբ և կգործի մինչև 2011թ. հունիսը:

Հանրային քննարկումներ հայ-թուրքական հարաբերությունների զարգացման վերաբերյալ

«Կամրջելով անդունդը» ծրագրի շրջանակներում ՄՁՄԿ-ն շուրջ հարյուր մասնագետների մասնակցությամբ հուլիսի 8-ին Երևանում իրականացրեց հանրային քննարկում «Հայաստան-Թուրքիա. շրջակա միջավայրի ընդհանուր խնդիրներ», իսկ հուլիսի կեսերին՝ «Հայ թուրքական համագործակցության հնարավորությունները ենթակառուցվածքների բնագավառում» և «Կրթության և գիտության խնդիրները հայ - թուրքական հարաբերությունների համատեքստում» թեմաներով:



Կրթության ոլորտի մասնագետները քննարկում են հայ-թուրքական համագործակցության հեռանկարները: Հուլիս 2010: Երևան



Փորձագետները քննարկում են անդրսահմանային ենթակառուցվածքների ոլորտում համագործակցության ներուժն ու հնարավորությունները: Հուլիս, 2010:

«Կամրջելով անդունդը» ծրագրի առաջին համաժողովը

Ս/թ հուլիսի 26-ից 28-ը «Կամրջելով անդունդը» կազմակերպության, ՄՁՄԿ, Հայ-թուրքական բիզնեսի զարգացման խորհրդի (ՀԹԲԶԽ) և ԳԱՅԱ կազմակերպությունները Ստամբուլում (Թուրքիա) իրավիճեցին «Կամրջելով անդունդը» ծրագրի առաջին համաժողովը: Ծրագիրը սկսվել է 2010թ. ապրիլի 1-ին՝ ՄՁՄԿ Նախաձեռնությամբ և «Կամրջելով անդունդը» կազմակերպության աջակցությամբ: Համաժողովին Նախորդել են Հայաստանի և

Թուրքիայի ընդհանուր հանրային շահերին և խնդիրներին առընչվող վեց հանրային քննարկումներ: Դրանց ընթացքում քննարկվել են երեք ոլորտների՝ շրջակա միջավայրի, կրթության և գիտության և ենթակառուցվածքների խնդիրներ: Քննարկումների արդյունքների ամփոփումը ցույց է



Արթուր Մարտիրոսյանը վարում է խորհրդաժողովի նիստը: Հուլիս, 2010. Ստամբուլ:

տալիս, որ Հայաստանում և Թուրքիայում երեք մասնակիցներից երկուսը փոխել են կարծիքը՝ ի նպաստ շրջակա միջավայրի, կրթության և գիտության և ենթակառուցվածքների ոլորտներում խնդիրների շուրջ երկխոսության ծավալման: Այս գործընթացը խորացրել է Հայաստանում և Թուրքիայում քննարկումների մասնակիցների գիտելիքներն ու ընկալումը երկու երկրների առջև ծառայած խնդիրների և դրանց համատեղ լուծումների անհրաժեշտության վերաբերյալ:

Ստամբուլյան համաժողովին մասնակցում էին հանրային քննարկումների սեղանավարներ, ոլորտների փորձագետներ, հանրային կարծիք ձևավորող գործիչներ և նշված ոլորտներում քաղաքականության մասնագետներ: Համաժողովը նպատակ ուներ ի մի բերել երկու երկրներում քննարկումների ընթացքում հնչած կարծիքներն ու մտքերը, վեր հանել կողմերի շահերը և ուղենշել նշված ոլորտներում համատեղ ծրագրերի հեռանկարները: Համաժողովի հիմնական արդյունքը, թերևս, անդրսահմանային համագործակցության Նախաձեռնությունների հղացման ջանքերը շարունակելու մասնակիցների ստանձնած պարտավորությունն էր: Համաժողովի մասնակիցները մասնավորապես համաձայնության եկան նպաստելու կլիմայի փոփոխության մեղման և արձագանքման տարածաշրջանային ընթացիկ և նոր Նախաձեռնություններին, այդ թվում՝ կլիմայի փոփոխության տարածաշրջանային սցենարների և տվյալների փոխանակման կառուցակարգերի մշակման միջոցով:

Մասնակիցները կարևորեցին Նաև անդրսահմանային ջրերի կառավարման և կենսաբազմազանության պահպանման խնդիրների լուծման համատեղ ջանքերը: Համաժողովի մասնակիցները նշեցին կովկասյան տարածաշրջանում շրջակա միջավայրի պահպանման գործում Թուրքիայի պատրաստակամ համագործակցության և տարածաշրջանային բնապահպանական ծրագրերին այդ երկրի ինտեգրման կարևորությունը, ինչը կամրապնդեր շրջակա միջավայրի տարածաշրջանային և համաշխարհային նշանակության խնդիրների լուծումներ փնտրելու ուղղված Հարավային

Կովկասի երկրների ջանքերը:

Ծրագիրը կշարունակվի մինչև 2010թ. դեկտեմբերը, երբ Երևանում կանցկացվի ծրագրի երկրորդ ամփոփիչ համաժողովը, որի ընթացքում կքննարկվեն երեք այլ ոլորտներում համագործակցության հեռանկարները:

Եվրոպական գործընկերության հետ՝ հանուն ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման

Հանուն խաղաղության եվրոպական հասարակական կազմակերպությունների գործակցության շրջանակներում ՄՁՄԿ-ն համագործակցում է Հակամարտությունների կարգավորման ինստիտուտի (ՀԿԻ) հետ՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված եվրոպական գործակցության ծրագրում (ԼՂԵԳ):

ԼՂԵԳ ծրագիրը հասարակական-քաղաքական դերակատարների հետ գործակցության միջոցով նպատակ ունի նպաստել Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) հակամարտության խաղաղ կարգավորմանը: Ծրագիրը մասնավորապես ուղղված է Հայաստանի և ԼՂՅ երիտասարդ գործիչներին: Այն հզորացնում է հակամարտությունից ազդված խմբերի կարողությունները՝ նրանց ներգրավելով հակամարտության կարգավորման գործընթացում: Ադրբեջանի, Հայաստանի և ԼՂՅ երիտասարդ գործիչների ցանցի մասնակիցները կգարգացնեն իրենց հմտությունները հակամարտության հաղթահարման բնագավառում, կհանգեն համընդհանուր տեսլականի և այսպիսով կնպաստեն ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորմանը: Արդյունքում, սահմանով բաժանված երիտասարդները ձեռք բերած կարողությունների և որոշակի փոխադարձ համաձայնության արդյունքում ավելի լավ կիրականացնեն կառուցողական և խաղաղաշինական ծրագրեր:

2010թ. օգոստոսին հայաստանյան Փորձագետների խորհուրդը քննարկման արդյունքում ընտրել է ԼՂԵԳ/ՀԿԻ ծրագրի ապագա մասնակիցներին: Փորձագետները քննարկել են երիտասարդ գործիչների ընտրության չափանիշերն ու մեխանիզմները, ինչպես նաև խաղաղաշինական հմտությունների տրամադրման գործում մասնագիտացած ուսուցանողների ընտրությանը վերաբերող հարցեր: Քննարկումը վարում էր ՀԿԻ պատվիրակությունը՝ հայաստանյան գործընկերների օգնությամբ: 2010թ. սեպտեմբերին ՀԿԻ-ին և գործընկերները հանդիպել են փորձագետների խորհրդի կողմից առաջարկված տեղական, ինչպես նաև տարածաշրջանային փորձագետների հետ՝ Թբիլիսիում խաղաղաշինության վերաբերյալ ձեռնարկ մշակելու նպատակով:

Մինչ 2010թ. նոյեմբերը Փորձագետների խորհրդի կողմից ընտրված և Թբիլիսիում փորձագետների միասնական սեմինարին մասնակցած ուսուցանողները կվերապատրաստեն շուրջ 10 երիտասարդ գործիչների: Վերապատրաստումների հիման վրա երիտասարդ մասնակիցները կձևավորեն և կիրականացնեն փոքրածավալ խաղաղաշինական ծրագրեր: Մասնակիցները կհանդիպեն՝ ներկայացնելու իրենց ստացած լավագույն դասերն ու գործունեության արդյունքները ձեռք բերած փորձը: Տեղական իշխանությունների դատին ներկայացնելու արժանի համատեղ առաջարկ մշակելու գործում նրանց կօգնեն ուսուցանողներն ու մասնագետները: Երիտասարդ գործիչների և ուսուցանողների խումբը կմասնակցի Սևծովյան խաղաղաշինական ցանցի տարածաշրջանային հանդիպմանը և կներկայացնի կա-

տարված աշխատանքն ու իր առաջարկները: Փորձագետների խորհուրդը կօժանդակի երիտասարդ գործիչներին՝ իրենց առաջարկի համար օժանդակություն ստանալու գործում:

Փոքր ՅԷԿ-երի տեխնիկական կարողությունների զարգացում

2010թ. սեպտեմբերի 7-ին «Նորսկ Էներջի» ընկերությունն իր հայկական գործընկեր «Հիդրոէներգետիկա» ընկերության և ՄՁՄԿ հետ համագործակցությամբ սկսեց Հայաստանում փոքր ՅԷԿ-երի հատվածի բազմաթիվ մասնակիցների գործունեության խթանմանը և ՅԷԿ-երի տեխնիկական կարողությունների զարգացմանն ուղղված քառամսյա ծրագիր:

Վերապատրաստման ծրագիրը նախատեսում է 4-6 նորակառույց կամ արդեն գործող փոքր ՅԷԿ-երի սեփականատերերի կամավոր մասնակցությունը: Բաց մրցույթի արդյունքում ընտրված վերապատրաստվողները ունեն բարձրագույն կրթություն հիդրոտեխնիկական կառուցվածքների, հիդրոէներգետիկայի ոլորտի նախագծման, շինարարության, բնապահպանական տնտեսագիտության և գործարարության բնագավառներում: Ծրագրի իրականացման ողջ ընթացքում վերապատրաստվողները կուսումնա-



Դասընթացի մասնակիցները կատարում են «Բարձրի ռեակտորը» բանակցային վարժությունը: Սեպտեմբեր, 2010: Երևան:

սիրեն ամբողջ հզորությամբ արդյունավետորեն աշխատող էլեկտրակայանների համար նախատեսվող տարբեր գործարարական, ռազմավարական և տեխնիկական իրավիճակներ: Այդ նպատակով մի քանի շաբաթվա ընթացքում մասնակիցներն ինտենսիվ կհաճախեն թե՛ դասախոսությունների, զեկուցումների և սեմինարների, և թե՛ կկատարեն անհատական աշխատանքներ: ՄՁՄԿ-ն դասընթացների մասնակիցներին կհաղորդի բանակցությունների և արդյունավետ հաղորդակցության խորը գիտելիքներ և հմտություններ:

Ծրագրին աջակցում են Ամերիաբանկը, ՀՀ Էներգետիկայի նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարությունը, KfW-ի կողմից ֆինանսավորվող ԳՀՀ «Վերականգնվող Էներգիայի աջակցություն» ծրագիրը (GAF-RE-KfW), Երևանի ճարտարապետական և շինարարության պետական համալսարանը և ֆինանսավորվում է Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության կողմից:



Մամուլը մեր մասին

Հանդիպում ԱՄՆ պետքարտուղար հետ

News.am-ը հաղորդում է, որ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Զինթոնը Երևանյան այցի շրջանակներում հուլիսի 5-ին «Գաֆեսճեան» թանգարանում հանդիպել է Հայաստանի քաղաքացիական հասարակության մի շարք ներկայացուցիչների հետ: Առանց հղումների իրավունքի ձևաչափով հանդիպմանը մասնակցել է նաև ՄՁՄԿ գործադիր տնօրենը: Քննարկումը ծավալվել է հիմնականում երեք ուղղությամբ՝ դարաքայան հակամարտության կարգավորում, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորում և Հայաստանում ժողովրդավարության զարգացում:

Ժողովրդավարության միջազգային օր

2010թ. սեպտեմբերի 15-ին Եվրոֆորում Արևելք Արևմուտք ցանցի շրջանակներում ՄՁՄԿ-ն կազմակերպել է խաղ-դասընթաց՝ նվիրված Ժողովրդավարության միջազգային օրվան, հաղորդում է «Վիսթ մեգրզինը»: Ըստ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 2007թ. որոշման, յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 15-ը նշվում է որպես Ժողովրդավարության միջազգային օր: Այս նպատակով ՄՁՄԿ-ն մի խումբ երիտասարդ և խոստումնալից երիտասարդների մասնակցությամբ կազմակերպել էր քննարկում Ժողովրդավարության սկզբունքների վերաբերյալ: Մասնակիցները սահմանեցին կատարյալ ղեկավարի կերպարը, ով կարող է առաջնորդել մյուսներին: Դերախաղերի միջոցով երիտասարդներն անձնավորեցին հայտնի հայ քաղաքական գործիչների՝ փորձելով ներկայացնել նրանց կերպարը: Միջոցառման ընթացքում դիտեցին «Ժողովրդավարությունը երեխաների աչքերով» ֆիլմը, որը բարձրաձայնում է Հայաստանում ժողովրդավարական մակարդակի վերաբերյալ տարբեր կարծիքներ: Միջոցառման վերջում մասնակիցները գրեցին «նամակ ապագայից»՝ 2020թ.-ից՝ ասես կանխատեսելով, թե ինչպիսին կլինի այդ ժամանակ ժողովրդավարության պատկերը Հայաստանում: Երիտասարդները հույս հայտնեցին, որ մինչ 2020թ. մամուլը կլինի ավելի ազատ և ավելի բաց, դատական համակարգը կբարելավվի և կոռուպցիան կնվազի, իսկ հայկական ԶԿ-ները կառավարության կողմից ստեղծած բարենպաստ պայմանների շնորհիվ ավելի ակտիվ մասնակցություն կունենան երկրի հասարակական կյանքում:

ՄՁՄԿ-ի մասին՝ մանրամասն ▶

2000թ. մարտին հիմնադրված Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (ՄՁՄԿ) Հարավային Կովկասի առաջատար վերլուծական կենտրոն է, որը համախմբել է հանրային և մասնավոր հատվածներում խոր ակադեմիական գիտելիքներ և աշխատանքային հարուստ փորձ ունեցող բարձրակարգ վերլուծաբանների և հետազոտողների: Մեզ միավորում են ընդհանուր արժեքները, նվիրվածությունը մասնագիտական գերազանցության և էթիկայի բարձր սկզբունքներին: Մենք սերմանում/զարգացնում ենք քաղաքականության մշակման ու իրականացման մասնակցային գործընթացը, մշակում և ներդրում տարածաշրջանային, ազգային և տեղական քաղաքականության նորարարական արդյունավետ գործիքներ ու մեթոդներ:

Մեր շահառուներին, այդ թվում՝ պետական կառավարման մարմիններին, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կառույցներին և զարգացման գործընկերներին ՄՁՄԿ-ն տրամադրում է որակյալ խորհրդատվություն, քաղաքականության վերլուծության և զարգացման/մշակման ծառայություններ: Կենտրոնը ստեղծում է նաև քաղաքականության ներկայացման/հաղորդակցության նորարարական գործիքներ և ձևավորում երկխոսության համար նպաստավոր միջավայր: Կենտրոնը երկրում և տարածաշրջանում որոշումների կայացման գործընթացին քաղաքացիների մասնակցության նոր արդյունավետ տեխնոլոգիաների մշակման և ներդրման առաջամարտիկն է: Առաջին անգամ 2004թ. ներդրված մեթոդները շարունակականորեն կատարելագործվել և վերածվել են երրորդ սերնդի գործիքների: Իր տասնամյա գործունեության ընթացքում ՄՁՄԿ-ն դարձել է գիտելիքի և գերազանցության լավագույն կենտրոններից մեկը՝ ճանաչվելով որպես հուսալի և ցանկալի գործընկեր ինչպես մեր տարածաշրջանում, այնպես էլ ողջ աշխարհում:

Էլ. փոստ՝ mail@ichd.org
Հեռ.՝ +374 (10) 582638, +374 (10) 528321;
Տաքս.՝ +374 (10) 527082
Հասցե՝ Երևան 0001, Սայաթ Նովա 19
 «Անի Պլազա» բիզնես կենտրոն

Դիտեք մեզ այստեղ՝  www.vimeo.com/ichd

Հետևեք մեզ այստեղ՝  <http://twitter.com/ICHDthinktank>

Միացեք մեզ այստեղ՝  <http://groups.to/ichd-thinktank>

Այցելեք մեզ այստեղ՝ www.ICHD.org

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

ՄՁՄԿ Լրատուի տպագիր տարբերակը կարող եք ձեռք բերել ՄՁՄԿ գրասենյակում

ԿՐՏԱՏԵՆԸ ԹՂԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

